

ՍԱՐԱՅ, ԻԶՏՆ (Յագր), այրք քաջք եւ ա-
նուանիք» (Պատմ., էջմիածին 1921, էջ 74) :
Նախորդ դէպքի յարաբերութեամբ՝ «Ի
նոյն ժամայն դարձաւ Սարի ընդդէմ նորա
(Ապուրվանայ) մինչ զեռ չէր վերուցեալ
զձեռն յերեսացն քաջեց զըւերն (թուրն) ի
պատենիցն եւ եհար ի վերայ աջ դեւին
(թեւին) եւ գլուխն ձախի ձեռամբն ի գետին
ձգեց: Եւ պատեցան զըւերը եւ կտրեցին
զգլուխն նորա եւ ետուն ի մարդ մի, որ տա-
րաւ առ Սմբատ թագաւորն» (անդ, էջ 75) :
Իսկ անկէ առաջ՝ «Ապա եկն մարդ մի Ամա-
տունի, անուն նորա Սարի, որ էր ի բերդն
ձախկին, ելաւ եւ եկ ընդդէմ եւ նա զբերդն
եւ ուրախ եղեւ Դէրէնն ու ետ իւր դանձ եւ
ձիս եւ ջորիս եւ հանդերձս եւ մեծարեաց
զնա յոյժ» (անդ, էջ 48) :

Գր. Դերենիկի հաւատարիմ իշխաններէն
է ԱՊՈՒՍԱԿՐ Ամատունի, որ անոր սպանու-
թեան առթիւ (886) կը կալանաւորուի. «Բայց
միայն զնահապետն Ամատունեաց զԱպու-
սակը ձերբակալ առին զնացին ի քաղաքն,
բարձեալ եւ զդին սպանելոյն տարան ընդ
իւրեանս ի պարձանս իւրեանց» (Արծր.
Պատմ., էջ 227) : Պատմութիւնը կը լսէ
Ապուսակրի կեանքի միւս պարագաներն ու
մահը :

Յետագային (981) կը յիշուի Աշոտ թա-
գաւորի Հռիփսիմէ կոյս աղջկան (կեղծ)
կտակագրին մէջ իբրեւ վկայ ՀԱՄԱԶԱՍՊ
իշխան Ամատունեաց (Սմբատեան, Երնջակ,
էջ 422—425 եւ Ոսեան, Վասպուրական-
Վանի վանքերը, Բ., էջ 567—569) :

Յովհաննավանքի մէջ կը գտնուի հե-
տեւեալ արձանագրութիւնը՝

Կամաւն բարերարին Աստուծոյ Հաւր եւ
Որդւոյ եւ Հոգւոյ եւ Թէոզոս մականուն
Չրքին, իշխանաց իշխան, որդի Անրերդոյ
Քրդին իշխանաց իշխանին, որդւոյ Տայիրին,
թոռն մեծ Քրդին, որդի արի եւ քաջին Վա-
չէի, զայս հաստատ արձանագրեցաք եւ
տուաք ի մեր պապանց, հարալ զանձագին
հայրենիք, ի հանդէն Սերկեւելոյ ի սուրբ
Կարապետս եւ ի սուրբ կաթողիկէս, որ
(ուր) եղեալ էր շիրիմ պարոն հայրն իմ այր
Ամատունի Տէրնխոռն Կայծակով էնգութա-
նաւի գլխովն որ ճանապարհն Գուրթայ ի
Սերկեւելոյ ծովն եւ չայի ըզեզ եւ Կաւանցն
հայրենիք է Սուրբ Կարապետիս: Այս իմ

տուած հանդս ի Սերկեւելոյ հանդէն էլ հանց
հաստատ հայրենիք է Սուրբ Կարապետիս :
Եւ ես Սուրբ խաթուն, ամուսին Անրերդեցի
Քրդին, մայր Չրքին եւ Սայրիկին, կրկին
հաստատեցի զվերոյգրեալս եւ եղբարքս խոս-
տացան մի քառասուն պատարագել զՔրիս-
տոս ամեն ամին... (Շահխաթունեան, Ստո-
րագրութիւն Կաթ. էջմիածնի եւ հինգ պա-
ւառացն Արարատայ, էջ 405) :

Այս արձանագրութիւնը անթուական է :
Պատմական կէտեր կը ցուցնեն թէ 1870էն
առաջ գրուած ըլլայ: «Այր Ամատունի» ի
մասին Հ. Ալիշան կը գրէ՝ «Յայս վայր, որ
է իբրեւ միջոց 150 ամաց գտանեմ յազգս
եօթն գլխատակ մարացի տոհմիս Վաչու-
տեանց որոց բաղդադէս կ'մն է իշխանանալ
կողմանցս, ուր գրեալ է համատոհմը նոցա
Ամատունիք տիրէին ի նախնունն, վասն որոյ
թուի յետոյ պայագատին զհայր իւր կոչել
Այր Ամատունի» (Այրարատ, էջ 254) :

Թէ Ամատունիներու սերունդէն են Վա-
չուտեանները, որոնք անոնց հողերէն մասի
մը տիրացած էին, այդ՝ ուրիշ առթիւ, իսկ
այժմ առաջ պիտի բերեմ ուրիշ արձանա-
գրութիւն մը եւս որուն մէջ կը հանդիպինք
Ամատունի մականունին. «Շնորհօքն Աստու-
ծոյ ես մեծ Նախիջեւանու Նունուց Ագա-
րեան Ամատունույ Պետրոսի որդի մահտեսի
Յովհաննէս եկի ի տիրապահ քաղաքս եւ
տեսի քայքայեալ զայս Աւետեաց սուրբ Աս-
տուածամանայ եկեղեցիս եւ ապաւինեալ յա-
մենակարողն Աստուած ձեռն արկաք ի շինել
ի տեառնապարգեւ ընչից մերոց. նախ զա-
րեւմտեան կոտորմն ի հիմանէ յաւերամբ
տեղւոյ եւ ապա զերեսին որմունան ի կիսոյն
սկսեալ հանդերձ կաթողիկէիս եւ զանգա-
կատամբ եւ ամենայն յօրինուածովք աւար-
տեցաք ի հայրապետութեան ամենայն Հայոց
Տեառն Դուկասու սրբազան կաթողիկոսի եւ
ի թագաւորութեան երկրիս Վրաց երկրորդ
Հերակլեայ քրիստոսապաակի ի ՌՄԼԳ
(1784) թուականին Հայոց ի Սեպտեմբերի
մուսն» (Ջալալեան, Ճամբորդութիւն ի Մեծն
Հայաստան, Տիփսիս 1858, էջ 73) :

Հ. Ալիշան կը գրէ՝ «Յետ իբր հազար
ամաց յելս կոյս ժԸ. դարու կային ի Մերիա
եղբարք երկու տոհմիկք Յովսէփ եւ Նիխաս,
որդիք Սահակայ կոմսութեամբ պատուեցե-
լոյ ի Հռովմայ գահէն, զորոց գրէր ոմն ի

մերոց հարց, յամի 1774, եթէ ստուգել լի-
նել յազգէ Հայոց ի Թիւրք աւանէ, յԱմատու-
նեաց տոհմէ 3900 ամաց հետէ որդի զհայր
փոխանորդեալ, այլ ոչ գիտեմ որպիսի
վաւերական վկայականք էին նոցա» (Այրա-
րատ, էջ 196) :

Մականուններու կամ տոհմանուններու
նմանութեան ու կրկնութեան հետեւանքով
կեղծուած կամ յարմարեցուած ազնուական ու
ամիրայական գերդաստանները յետին դա-
րերու մէջ ցանցառ չեն երեւցած հայ իրա-
կանութեան մէջ, ուստի եւ տարակոյսով
ստիպուած ենք նայիլ այս աւանդութիւննե-
րու եւ տեղեկութիւններու վրայ :

Համանուն տոհմանուն ունեցող գեր-
դաստաններ սիրով եւ հաճոյքով պիտի ու-
զէին հին Ամատունիներու սերունդէն ըլլա-
լու, զի պատմութեան մեզի հասցուցած նա-
խարարներն ու իշխանները — բացառու-
թիւններ քիչ կան — եղած են քաջ ու հայ-
րենասէր եւ գիտցած նախարարական միւս
աներու հետ լաւ յարաբերութեան մէջ մնալ
եւ երկրին օգտին ծառայել անվերապահ ու
անձնուէր :

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՅՈՒՑԵԿ ՀՆՅԵՐԷՆ ՉԵՌՇԳՐԱՅ
ՆԻԿՈՍԻՇՅԻ Ի ԿԻՊՐՈՍ

(ԵՅԺԾ ՓՈՒՆԳՐՈՒԵԾ ԵՆԹԻԼԻԵՍ,
ԿԵԹՈՂԻԿՈՍԵՐԵՆ)

(Շարունակութիւն)

5.

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

Հիմ. Թ. 11: Ժէ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 374: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 29,2 × 20,4
հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԹ՝ բուղբ: —
ԿԱԶՄ՝ չունի: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱԶՊԱՆԿ՝ չունի:
— ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ կազմալոյժ վիճակի մէջ, սկզբէն,
— մէջէն, վերջէն քղեր ինկած: — ԳԻՐ՝ բոլորգիր: —
ԽՈՐԱՆ՝ չունի: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ իւրաքանչիւր գլխաց
սկիզբը: — ՆԿԱՐ՝ չունի: — ԶԱՐԳԱԳԻՐՔ ԵՒ ԼՈՒ-
ՍԿԻՐՔ: — ՆԿԱՐ՝ չունի: — ԶԱՐԳԱԳԻՐՔ ԵՒ ԼՈՒ-
ՍԱՆՑԱՂԱԳՐՔ՝ կամ գլխաց սկիզբը: — ԽՈՐԱԳԻՐՔ՝
կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ Ժէ. դար: — ՏԵՂԻ՝ ան-
ծառօք: — ԳՐԻԶ՝ Արիստակէս:

Մատենա է Վարք Հարանց: Չեռագիրը
կազմալոյժ վիճակի մէջ ոչ միայն թղթերու
ետեւառաջութիւն կրած է, այլ եւ ինկած են
անկէ թղթեր: Պէտք է ամբողջը դասաւորել
Կ. Պոլսոյ 1720ի հրատարակութեան վրայէն:
Հմտ. Տաշեան, Յուլիոս Միլիթ. Մատենա-
դարանի, Թ. 66, էջ 294—303:

Յիշատակարանք. 1. Թղ. 374ր. Յիշա-
տակարան է գրոց Հարանց վարուց: Փառք...
Աստանօր դրցեալ եւ զբաւ առեալ կատարե-
ցաւ հոգէզուարճ բուրաստանս որ ասի Հա-
րանց վարք |||: Շարունակութիւնը ին-
կած:

2. Թղ. 33ա. Բուն գրչէն. «Ով ընթեր-
ցողք, յիշեսցէ ի սուրբ աղօթս ձեր զանար-
թան Արիստակէս երէց գրիչս ի Քրիստոս»:
Նոյնը նաեւ 274ա:

3. Թղ. 8բ. Նոր գրչէ. «Զվերջին ըստա-
ցողս յիշեցէք Սարգիս վարդապետս եւ զձնօղ
զնիկօղոսն եւ զվարդենին եւ զամենայն ա-
րեան մերձաւոր իմ եւ Աստուած ողորմի
ստացէք»: Նոյնը կրկնուած յաճախ նաեւ
այլուր:

6.

Ժ Ո Ղ Ո Վ Ա Յ Ո Յ Ք

Հիմ. Թ. 14: ՌԿԵ = 1616:

ԹՈՒՂԹՔ՝ 483: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,2 × 15 հմ.:
— ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻԹ՝ բուղբ: —
ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱԶ-
ՊԱՆԿ՝ 2 սկիզբն եւ վերջը: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ:
— Դատարկ 1ա, 4բ, 483բ: — ԳԻՐ՝ մտք-չապիր: —
ԽՈՐԱՆ՝ չունի: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ 5ա: — ՆԿԱՐ՝ չունի:
— ԶԱՐԳԱԳԻՐՔ ԵՒ ԼՈՒՍԱՆՑԱՂԱԳՐՔ՝ կամ: — ԽՈՒ-
ՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1616: — ՏԵՂԻ՝
թոխք: — ԳՐԻԶ՝ Կարապետ:

Մատենա է Մասեր Հարանց Վարուց.
ուր կան.

1. Թղ. 1բ—4ա. Յանկ գրոցս Հարանց
վարուց:

2. Ա. 5ա. Վկայութիւն վասն երանու-
թեամբ յիշատակեալ արիւթեան եւ ունկն-
գրութեան: Առ որս բանս մեր աջողի ի նեղ
եւ ըստ Քրիստոսի ճգնութեանն հանդիպունն
այսուհետեւ արձակի շտաւեղ: Չի որպէս
ամենայն պողոնոյն նախ արձակի ծաղիկն...:

= Յովհ. Կլիմաքոս, Դ.:

Չեռագիրս մէջ բազմաթիւ զլուխներ ներս առ-
նուած են Յովհ. Կլիմաքոսի եւ Յովհ. Աստուածա-

բանի գրուածքներէն. այն տեղիքները զորոնք ճշգրտած եմ, նշանակած եմ Ա. Բ. եւն գրերով, նկատի առնելով այն զլիակարգութիւնները, զորոնք նշանակած եմ այս երկու մատենադիրներու վրայ զբաժնուսուսութեանս մէջ՝ Սիմէոն Պղնձասանեցի եւ իր թարգմանութիւնները վրայեղէնէ. Հանդ. Ամս. 1947, էջ 257—181 (Յովհ. Կլիմաբոս) եւ 1949, էջ 5—21 (Յովհ. Աստուածարան) = Սիմ. Պղնձասանեցի, Վիեննա 1951, էջ 103—159:

3. Բ. 25ա. Վասն խոկման մահու: Ամենայն բանի եւ մտածութեան նախապատիւ է խոկումն մահու եւ յանցանաց. եւ առաջին է լալոյ եւ սգոյ, թէպէտ եւ զինի նորին բանս կարգաւ: Խոկումն մահու ամենայն աւուր մահ...:

= Յովհ. Կլիմ. 2.:

4. Գ. 28բ. Նորին վասն մատնութեան: Ոչ ոք յիմաստնոց այսմ հակառակ ասել ինձ թուի...:

= Յովհ. Կլիմ. Ժ.:

5. Դ. 31բ. Նորին խրատք վասն շատխաւութեան: Ասացաւ ի մէնջ դուզնակեայ սղալանք այնոցիկ, որք դատեն եւ լեզուաբ տանջեն...:

= Յովհ. Կլիմ. ԺԱ.:

6. Ե. 33բ. Նորին վասն Ստութեան: Ծնունդ երկաթի եւ քարի հուր. ծնունդ շատխաւութեան եւ խեղկատակութեան ստութիւն...:

= Յովհ. Կլիմ. ԺԲ.:

7. Զ. 35ա. Նորին վասն Չանձրութեան: Մի եւ այս պատահի ի բազում իրս շատխոսութեան սաղարթ. եւ նախածնող ասեմ ձանձրութեանն զստութիւն ի չար շղթայսս զոր ասեմք...:

= Յովհ. Կլիմ. ԺԳ.:

8. Է. Թդ. 37բ. Սրբոյն Թէոփիլոսի ասացեալ յաղագս Չղջման եւ արտասուաց: Արդ պարտ է անդադար ամենայն մարդոյ զայս զմտաւ ածել եւ ասել ընդ միտս. Ահա եկն առաւաւտ...:

= Վիեննա, Թ. 524, 104բ (Յուլյ. 995):

9. Ը. 42բ. Ճառ արբայ Մովսէսի վասն Ոխակալութեան: Եթէ ոք առցէ յուշ զայն որ ոք խոսկեցոյց զնա կամ բամբասեաց կամ զրկեաց...:

= Վարք Հարանց, Բ. 532—537:

10. Թ. 46ա. Յաղագս մոլորութեան բանի գիւացն որ եւ զբազում եղբարսն անյոյսացուցանեն եւ մոլորեցուցանեն ի ճշմարտութենէն: Արարիչ ամենայնի եւ հիմն

հաստատութեան եղելոց, որ ի ձեռն իմաստութեան զամենայն հաստատեցեր...: Գիտաստիք, եղբայրք, զի այլ ընդ այլոյ հայհոյութեան դեւն...:

= Յովհ. Աստուածարան, Ե.:

11. Ժ. 48ա. Վասն բարկացողաց եւ հպարտից: Բարերար Տէր եւ գթած, որ ոչ բարկանաս ի վերայ հպարտից...: Է երբեմն, յորժամ զմիտս յափշտակեն դեւքն եւ փոփոխեն զնա տեղուղէ ի տեղի...:

= Անդ, 2.:

12. ԺԱ. 50ա. Վասն պարզեւատ(ու)ութեան որ կատարի յաղագս միանձանց յերրորդ չափահասութեանն: Քրիստոս զգեցեալ զհայր, զի առ քեզ ցնծայ տեսութիւն բանաւորաց ի ձեռն աշխատութեանց...: Արդ ցուցանեմ ձեզ, Եղբարք, եթէ ուստի՞ սկիզբն լինի միխթարել զձեզ...:

= Անդ, Է.:

13. ԺԲ. 51ա. Վասն գործակցութեան առաջին կողմանն: Են ոմանք, որ զխոնարհութիւն զգեցեալ են յանձինս իւրեանց եւ զխորհուրդս արհամարհել զերկրայմերձ...:

= Անդ, Ը.:

14. ԺԳ. 54բ. Վասն սիրոյ զոր ցուցանեն սուրբ հրեշտակքն առ ճգնաւորս եւ միխթարեն զնոսա. եւ յաղագս մոլեղնութեան դիւաց, եթէ որպէս է մոլորութիւն նոցա: Յորժամ խափանի ոք ի ծուլութենէ եւ զայ ի զղջումն ապաշխարութեան...:

= Անդ, ԺԱ.:

15. ԺԴ. 63ա. Յաղագս պատուիրանապահութեան գիտութեանցն զարտաքինն եւ զխորինն: Որ ոք ցանկացի լինել որդի Աստուծոյ, գթով եւ ջերմութեամբ պարտ է նմա ընծայիլ բայց ի մեղաց: Լուարուք եւ նուաստութեանս իմ եւ ես պատմեցից զորդէձնութիւն որ լինելոց է սուրբ պատուական հայրութեանս...:

= Անդ, ԺԵ.:

16. ԺԵ. 68ա. Յաղագս կամաւորական մահուան ելանելոյ յայսմ աշխարհէ եւ բնակել ի կեանսն յաւիտենական: Ով ոք որ վաղձանեցաւ յայսմ կենաց, եւ ցանկայ բնակել առ Աստուած, այնուհետեւ ի մշտնջենաւորն կենդանի կայ...:

17. ԺԶ. 68բ. Վասն համարձակութեան ունելոյ առ Աստուած. ոմանց որ գործակից է նոցա հոգի Յիսուսի Քրիստոսի. եւ եթէ որպէս է աւզնականութիւն զոր շնորհէ ի

ձեռն Հոգւոյն սրբոյ: Այսուհետեւ ճանաչել զբանն զոր յայտնեաց երանելի առաքեալն Պողոս...:

18. ԺԷ. 70ա. Նորին սուրբ հաւերն Յոհաննու ասացեալ: Գիտաստիք, եղբարք, զի հակառակ կայ մարմնական կենացս ամենայնի...:

19. ԺԸ. 71բ. Վասն երեւելոյ Աստուծոյ առ հոգին եւ համարձակութիւն զոր ի վերուստ շնորհեցաւ նմա. եւ թէ որպէս տնօրինարար խօսի ընդ նմա: Պատմէր ոմն յեղբարցն ընդ խօսելն նորա առ Աստուած. Ով կենդանութիւն հոգւոյ իմոյ. զուարճացայ զեղեցկապէս ի փառս քո...:

20. ԺԹ. 73ա. Վասն աղօթից եւ բնութեանց հոգեւորաց եւ վասն իմաստութեանն Աստուծոյ: Որ ոք հաղորդեալ է ընդ Յիսուսի Քրիստոսի, զգուշանալ պարտ է աղօթից...:

21. Ի. 77ա. Վասն շնորհացն որ պարգեւի ի Հոգւոյն սրբոյ միացելոցն ընդ Աստուծոյ եւ վկայութիւն սովորականացն, որ սովորեալ են ընդ Աստուծոյ միաւորեալ: Վասն շնորհաց Հոգւոյն սրբոյ, զոր եւ խընդրեցեր զբել քեզ, ով ոք է, բաւական ճառել...:

22. ԻԱ. 82բ. Վասն խաղաղացեալ վայելչութեան որ միաւորի ի տեսութիւնն Աստուծոյ: Կամէի զբել եւ ոչ ժամանեցի, զի մնաց ի մէնջ որ փառաւորն էր...:

23. ԻԲ. 85բ. Վասն այլ եւ այլ բանիցն զոր խօսեցան սուրբ հարքն. թէպէտ բաժանեալ են ըստ ելիս, սակայն ամենեքեան ի Հոգւոյն սրբոյ են: Տնօրէնութիւնն Աստուծոյ եւ միաւորութիւն բանին նորա սուրբ եւ պատուական՝ հարքն (2. խարքն) խօսեցան...:

24. ԻԳ. 84ա. Հարցումն եղբարց թէ զի՞նչ լինիցի հոգին յետ փոխելոյն ի մարմնոյն. եւ զի այլ եւ այլ ասեն սուրբ հարքն: Որպէս եւ կամեցաւ շնորհքն Յիսուսի Քրիստոսի պարգեւեաց ի ձեռն աղօթից քոց, եղբայր. լուր եւ այժմ փոքր բանի մերոյ...:

25. ԻԴ. 88բ. Վասն գերծանելոյ յաստի կենացս: Ապա պարտ է զորոշումն յաստեացս...:

26. ԻԵ. 88բ. Վասն տեսեան սուրբ խորհրդոյն մարմնոյ եւ արեան Յիսուսի Քրիստոսի: Ամենայն խորհուրդ հոգեւոր ուրախութիւն են ճշմարտիցն...:

27. ԻԶ. 90ա. Վասն թէ որչափ բարի է խաղաղացեալ կեանք ճգնաւորաց առ ի ճանաչել որդի, զի նմայ արար զամենայն արարածս. եւ սուրբ հարքն մեր միածին անուանեցին, զի ի նմա կազմեցան տիեզերք: Ոմանք ասէին ի նոցանէ, թէ միտք է ամենայն բաւարարաց եւ Հօր...:

28. ԻԷ. 92ա. Վասն տեսութեան եւ գործակցութեան իւր: Ոմն յեղբարցն պատմէր, թէ մինչ էի ի ցանկութիւնս արքայութեանն երկնից...:

29. ԻԸ. 92բ. Վասն Երիտասարդաց եղբարց: = Վարք Հարանց, Բ., 631—633:

30. ԻԹ. 95ա. Զայս թուիթ գրեալ առ ոմանս յեղբարցն: Ըստ լուսոյ աստուածային ասեմ, որ ի հոգիք քո բնակեալ է...:

31. Լ. 103բ. Երկրորդ ճառ. սկիզբն գիտնականութեան: Որպէս ի պարզութիւն նորոյ լուսաւորի պարունակն...:

32. ԼԱ. 109բ. Երրորդ ճառ իմաստութեան: Երեք են տիպք մտացն...:

= Յովհ. Աստուածարան, ԻԲ.:

33. ԼԲ. 112բ. Նորին վասն չարահամբաւ տիկնոջ որովայնին: Հանդերձեալ եմ վասն որովայնի ասել...:

= Յովհ. Կլիմ. ԺԴ.:

34. ԼԳ. 120ա. Նորին վասն անապակաւութեան վաստակոյ ի յապականութեան քրտունք սրբութեան եւ իմաստութեան: Սրբութիւն իցէ անմարմնոցն բնութեան միաւորութիւն...:

= Անդ, ԺԵ.:

35. ԼԴ. 141բ. Նորին վասն արծաթսիրութեան: Բազումք որք զիմաստասիրական վարդապետեցին...:

= Անդ, ԺԶ.:

36. ԼԵ. 143ա. Նորին վասն Անստացուածութիւն է հոգւոյ ի բաց ընկեցումն...:

= Անդ, ԺԷ.:

37. ԼԶ. 145ա. Նորին վասն Անզգայութեան եւ մեռելութեան հոգոյ եւ մտաց նախ քան զմեռանել մարմնոյ: Անզգայութեան որ ի մարմինն եւ հոգի...:

= Անդ, ԺԸ.:

38. ԼԷ. 149ա. Նորին վասն քնոյ եւ արթնութեան եւ ի ժողովս սաղմոսերգութեան: Քուն է կուրթեան բնութեանս հաստատութիւն...:

= Անդ, ԺԹ.:

- 39. ԼԸ. 150բ. Նորին վասն մարմնական արթնութեան. եւ թէ որպէս է ի նմայ մտանել: Երկրաւոր թագաւորութեանց նիւթեղէն սպասաւորք...:
 - = Անդ, Ի.:
- 40. ԼԹ. 154ա. Նորին վասն Ծուլութեան եւ անօրէնութեան: Ծուլութիւն է տղայական սովորութիւն...:
 - = Հմմտ. անդ, ԻԲ.:
- 41. Խ. 155բ. Նորին վասն բազմակերպ սնափառութեան: Ոմանք կարգ բանի...:
 - = Հմմտ. անդ, ԻԲ.:
- 42. ԽԱ. 162բ. Նորին վասն հեղութեան եւ պարզութեան եւ անչարութեան եւ չարութեան: Նախընթաց արեղական առաւօտ...:
 - = Հմմտ. անդ, ԻԳ.:
- 43. ԽԲ. 166բ. Նորին վասն ախտից կորստեան եւ բարձր խոնարհութեամբ աներեւոյթ զգայութեամբ: Որ սիրոյն Աստուծոյ ուղղապէս...:
 - = Անդ, ԻԵ.:
- 44. ԽԳ. 179ա. Նորին յաղագս քննութեան խորհրդոց եւ ախտից եւ առաքինութեան: Քննութեան պարապեալ եւ ի նոյն զեզերեալ...: Վ. անաղտ եւ վառ հաւատոյն ջահէլք ընդ փեսային ի յառազատին մտին լուսոյ ի գրգանս անախտն ծոցոյ:
 - = Անդ, ԻԶ.:
- 45. ԽԴ. 184բ. Երանելոյն Անտոնի անապատականի խրատ առ միանձուռն: Եւ յաւուր միում էին առ նա ոմանք եւ աղաչէին լսել ի նմանէ բան...:
 - = Հմմտ. Վարք Հարանց, Բ. 29:
- 46. ԽԵ. 209բ. Ապողոնեայ: Զայս միւս եւս այլ գարմանալիս եւս տեսաք եւ սքանչացաք...:
 - = Անդ, Ա. 241:
- 47. ԽԶ. 213ա. Խրատ սուրբ հարցն ոգէշահք: Տուր զսիրազ Աստուծոյ եւ յորժամ ցաննու խորհուրդ քո...:
 - = Հմմտ. Վարք Հարանց, Բ. 571—573:
- 48. ԽԷ. 231ա. Բանք սուրբ հարցն վասն որոշողութեան խորհրդոց եւ ոյք կամին ապրել յաշխարհէս: Աբար Աստուած գմարզն եւ եղ զնայ ի գրախտին փափկութեան...:
 - = Վարք Հարանց, Բ. 571—573:
- 49. ԽԸ. 235ա. Խրատ սուրբ հարցն: Եկն երբեմն ծերունի մեծ տեսանել զրնակեայն ի խուզան...:
 - = Հմմտ. Վարք Հարանց, Բ. 571—573:
- 50. ԽԹ. Խօսք Յովհաննու Մանգակունւոյ, խրատ եւ գովութիւն ճգնաւոր կրօնա-

- ւորաց եւ յանդիմանութիւն ծուլից եւ արհամարհողաց զպատուիրանս Աստուծոյ: Առն մոնողոնի ուսելոյ եւ իմաստնոյ, որ ունի զգիտութիւն որոշողութեան...:
 - = Հրտ. Շողակաթ, Վաղարշապատ 1913, էջ 127—130:
- 51. Ծ. 244բ. Խօսք Եպերեքեայ միայնակեցի: Ասաց ծերն. Որպէս առիւծ ահաւոր է ի վերայ իշավարաց...:
 - = Վ. Հ. Բ. 591—592:
- 52. (ԾԱ.) 249բ. Վարք եւ ճգնութիւն սուրբ Հարցն: Փութացարուք, միայնակեացք, մի ինչ յանցանել...:
 - = Վ. Հ. Բ. 607—609:
- 53. ԾԲ. 252ա. Հարցմունք սուրբ Հարցն յաղագս խորհրդոց: Հարցունմն. Զիա՞րդ պարտի կալ միայնակեցին ի խցի իւրում: Պատասխանի. ի բաց կալ ի մարդկան ծանօթութենէ...:
 - = Հմմտ. Վարք Հարանց, Բ. 583:
- 54. (ԾԳ.) 259ա. Վարք եւ ճգնութիւն սուրբ Հարցն: Հարցաւ ծեր, թէ որպիսի պարտ է լինել Միայնակեցին:
 - = Հմմտ. Վարք Հարանց, Բ. 583:
- 55. (ԾԴ.) 261բ. Հարցմունք եւ խրատ ոգէշահք սուրբ Հարցն: Ասաց ծեր. Բանդի եթէ ոչ տեսանէ ոք...:
 - = Հմմտ. Վարք Հարանց, Բ. 200:
- 56. (ԾԵ.) 263ա. Հարցունմն առ ծերս եւ պատասխանի: Ասաց արբայ Թէոդորոս ի Սկիթ. Գայ խորհուրդ եւ աղմկէ զիս...:
 - = Հմմտ. Վարք Հարանց, Բ. 200:
- 57. (ԾԶ.) 264բ. Խրատ հաւատոյ Միանձանց (այլուր Մոնողոնաց) Յոհաննու Հայոց կաթողիկոսի: Արդ են վանականք որ գիտեն զխորհուրդս մտաց իւրեանց. եւ գիտութեամբ որոշողութեամբն եւ հանապաղ հարթիկ վաստակօքն յաղթեն նոցա. աստ փառաւորին եւ անդ պսակին...: ՎՋ. Եւ գուկաց մնա՛ ի սէրն Քրիստոսի, զի այն է բարի, հաճոյ եւ կատարեալն առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւտեսանս:
 - = Թ. 50ի այլ խմբագրութիւն:
- 58. ԾԷ. 270ա. Երանելոյն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի խրատ ճգնաւորաց եւ ցոյցք հանդիսից առաքինութեան. Յաճախապատումն զրոց: Ամենայն ոք, որ հրաժարեցան յաշխարհէս եւ ընծայեցին Աստուծոյ զանձինս...:
 - = Յաճախապատում, Վենետ. 1838, էջ 206—219:

- 59. (ԾԸ.) 276բ. Ի թղթոյն Մովսեսի միայնակեցի առ Ամոն բան խրատու: Երկիւղ Աստուծոյ մերժէ զչարախօսութիւն...:
 - = Վարք Հարանց, Բ. 532:
- 60. (ԾԹ.) 277բ. Թուղթ սուրբ հօրն Ամոնի առ Միայնակեացս: Հոգին սուրբ ուր եւ կամի հանգչի...:
 - = Անդ, Բ. 597:
- 61. Կ. 280բ. Ամոնայ այլ թուղթ: Սիրելիք, տեսանեմ այժմ...:
 - = Անդ, Բ. 599:
- 62. (ԿԱ.) 285ա. Նորին այլ թուղթ: Սիրելիք իմ ի Տէր, զիտէք եւ դուք...:
 - = Անդ, Բ. 602:
- 63. (ԿԲ.) 287ա. Խօսք վասն երկիւղի Տեառն: Հայեաց ի քեզ իբրեւ զճշմարիտ...:
 - = Անդ, Բ. 527:
- 64. (ԿԳ.) 292բ. Բան խրատու հոգեւոր հօրն Պրոկղի: Յայնժամ բանս վիճոյ զիւր ընդ մարմնոյ քո...:
 - = Անդ, Բ. 602:
- 65. (ԿԴ.) 293ա. Նորին այլ բան: Մարտ եւ մեծ մրցումն ճգնաւորին...:
 - = Անդ, Բ. 527:
- 66. (ԿԵ.) 294ա. Նորին բան գովութեան առ Արեղայ: Երանելի էք, պատուական դուք, աստ եւ յերկինս...:
 - = Անդ, Բ. 602:
- 67. (ԿԶ.) 294ա. Նորին այլ բան: Դիտաւորութիւն հարեղայի...:
 - = Անդ, Բ. 602:
- 68. (ԿԷ.) 294բ. Խրատ ոգէշահք: Ասաց ծեր ոմն մեծ, եթէ պարտ է մարդոյն...:
 - = Անդ, Բ. 602:
- 69. ԿԸ. 302ա. Յաղագս պատուիրանապատեան միաշարաթուն: Սիրելիք մեր, պարտ է զգուշանալ վասն խորհրդոյ միաշարաթին...:
 - = Յովհ. Աստուածարանի, Ակինեան, Սիմէոն Պղնձահանեցի, էջ 158:
- 70. (ԿԹ.) 324բ. Թուղթ մեծի հօրն Մակարայ: Հայրն Մակար զրէ՛ ամենայն սիրելի որդւոց իւրոց...:
 - = Վարք Հարանց, Բ. 562—590:
- 71. (Հ.) Յաղագս ճգնութիւն Հարեղայի: Որպէս ամենայն մարդ զի տնկեսցէ այգի...:
 - = Անդ, Բ. 628/30:
- 72. (ՀԱ.) 329բ. Յաղագս բարեբաստիկ իմաստութեանն եւ ոգէշահք բարի կենցաղապարութեան խրատ առ կրօնաւորս եւ զապարութեան խրատ առ կրօնաւորս միանգամայն առ ամենայն հաւատացեալս Քրիստոսի: Պայժառ եւ արփափայլ արեգակնային ճառագայթ ի ծագելն իւրում...:
 - = Անդ, Բ. 628/30:
- 73. Թ. 335բ. Եղիշէի վարդապետի ասացեալ վասն Հաղորդութեան: Զոր աներկ-

- ւոյթսն ասեն, ոչ ահա մի է Տէր, մի հաւատք...:
 - = Հմմտ. Հանդ. Ամս. 1951, էջ 32:
- 74. Թ. 337ա. Բարեք որ ըստ ապաշաւանաց յեղման ի բանէն Աստուծոյ Հօր բունմն բարեաց տարափոխ այլայլ ի բնութեան յայտնիկ ունին զօրութիւն: Առաջին զղջումն անապաշաւ անփոփոխ ըստ իմացականին բերման...:
 - = Հմմտ. Հանդ. Ամս. 1951, էջ 32:
- 75. Թ. 339ա. Յոհաննու խրատ Կանոնական: Յոյժ ահագին եւ սոսկալի եւ ահեղ է օրն դատաստանին...:
 - = Հմմտ. Հանդ. Ամս. 1951, էջ 32:
- 76. Թ. 344ա. Նորին Յոհաննու վասն հանդերձեալ դատաստանին: Պարտապան եմք, ով սիրելիք, զմիմեանց բռն բառնալ...:
 - = Վիեննա, Թ. 364, 180ա (Յուզակ, 816) յանուն Ոսկեբերանի:
- 77. Թ. 354բ. Նորին ի նոյն զրոց յորդորակ: Եւ արդ զայս զիտել իւրաքանչիւր ոք ի մէնջ յիւր ինքեան ի շտեմարանս սրտին մտեալ...:
 - = Յովհ. Աստուածարան, Դ.:
- 78. Թ. 361բ. Յաղագս պոռնկական խորհրդոց եւ փոփոխումն պատերազմի եւ փորձութեանց եւ չար եւ ատելի ախտից: Փառաւոր ճառագայթ որ յայտնեցար...:
 - = Յովհ. Աստուածարան, Դ.:
- 79. Թ. 364բ. Ի Հարանց վարուցն բանք պիտանի: Որ էրն ի սկզբանէ Աստուածն բան, վասն բարոյն զոյացոյց զէսս յոչէից... (մանր պատմութեան):
 - = Վիեննա, Թ. 66, 1ա (Յուզակ, 295) եւ Վարք Հարանց, Կ. Պոլիս 1720, էջ 3—8 (տարբեր խմբագրութեամբ):
- 80. Թ. 410ա. Ի վարուց ճգնաւորաց բանք պիտանի: Երբեմն հայրն Անտոն աղօթէր ի խրճի իւրում...:
 - = Վ. Հ. Բ. 452—485:
- 81. Թ. 425բ. Անանիայի հոգիանորոգ վարդապետի խրատ զոր արարեալ է յաղագս Արտասուաց: Ով աստուածասէր սիրելի եղբայր, խնդրող սիրոյն Աստուծոյ, զբանն զոր աղաչեցեր զիս ցուցանել քեզ յաղագս զղջման եւ արտասուաց, եւ ես սակաւուք պատճառս տամ քում աստուածսիրութեանդ...:
 - = Հրտ. Գր. Վ. Աշրգեան, Պատկեր 9 (1898/9), էջ 175—179, 197—201, 217—221, 241—245, 426—428:
- 82. Թ. 439ա. Այլ եւ զայս հարցեր, եթէ որչափ մասունք են որ մարդն կատա-

րեալ խոնարհութիւն ստանայ. եւ աղաչեցեր թէ յայդ գրեալ ի գիրդ: Արդ որպէս ասէ առաքեալ. Ամենայն խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել...:

= Վիեննա, 364, 138բ:

83. ՉԱ. 443ա. Անանիայի վարդապետի խրատ վասն Համբերութեան եւ խաղաղութեան: Արդ յորժամ մարդն շնորհս առնու յԱստուծոյ իմաստութեան եւ երկիրդի...:

= Վիեննա, 364, 144բ (Յուլ. 816):

84. (ՉԲ.) 446բ. Խրատք հոգէչաճք սուրբ Հարցն ասացեալ: Չլուծիւն պատուեալ իրրեւ զգանձ պատուական...:

85. ՉԳ. 452—458ա. Հարցունս սուրբ վարդապետին մականունն Սարկաւագ, եթէ արժան իցէ թողուլ ի ժամանակի ինչ զեղբարս կենակիցս եւ երթալ յանապատ...: Պատասխանի. Եթէ ունէաք ճշմարտութեամբ զսովորութիւն ուղղագործութեան հարցն մերոց...: ՎՋ. Չպարտա խնդրոյն հատուցի սակաւ սեղոյրայիւք, թէպէտ եւ անազան... եւ դու, երջանիկ, առ ընկալ զհայցելիդ յարձարձունս բնաւորելոյդ ի քեզ առաքինութեան եւ ընդարոյս համեստութեան, արտաբոյ զմեզ թողլով մեղադրութեան. ողջ լեր ի բարիս:

86. ԹԳ. 458ա—461բ. Սրբոյն Թաթլոյ Բան խրատու, յորժամ առաջնորդ կարգեաց իւրոյ ուխտին զԹովմաս: Որդեակ իմ Թովմաս, կոչեաց զքեզ Հոգին սուրբ...: ՎՋ. բնութիւն արա քեզ եւ զերկիւզն Աստուծոյ գործակից. եւ զամենայն առաքինութիւն զիւրաւ կարես: Եւ երթեալ զարդարէր զանապատն ամենայն բարեձեւութեամբ, բնակեցուցանելով ի նմա բազմութիւն եղբարց: Եւ կացեալ հրեշտակակրօն վարուք փոխեցաւ առ Քրիստոս: Որում փառք յաւիտեանս. ամէն:

= Սոփերք հայկականք, ԺԱ. 52—59:

87. ԹԴ. 461բ. Խրատ հօրն Թաթլոյ: Քրիստոս ասաց. Ես եմ ճանապարհ եւ ճրջմարտութիւն եւ կեանք...: ՎՋ. եւ լքանի անձն որ ոչ ունի զպնդութիւն բնութեան:

= Վիեննա, Թ. 257, 13ա (Յուլ. 657):

88. ՉԸ. 462բ—481ա. Գիր երանելոյն Փիլիքսիանոսի եպիսկոպոսի, զոր գրեաց վասն սկիզբն առնելոյ ելանելոյ յաշխարհէս յայտնիկ. եւ գրեաց այսպէս: Վասն զի տեսի զհոգի քո, որպէ անդրանիկ հոգս խնայ...:

ՎՋ. եւ զտիւ եւ զգիշեր խաչէ զանձն իւր աշխատութեամբ:

= Վարք Հարանց, Բ. 538—562:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՅՔ. 1. ԹԴ. 482ա. Փառք... որ արժանաւորեաց զանարժանութիւնս մեր հասանել յաւարտունս աստուածախօս գրոցս Հարանց Վարուց տկար եւ տարտամ ձեռամբ. անարհեստ եւ փձուն զբշի մեղապարտ լոկանուն Կարապետիս յամի ՌԿԵ թուի, ի Թոխաթ մայրաքաղաքի, ի յստացունս եւ ի վայելն գերապանձ ճգնողի եւ աննիրհական հսկողի Վարդան մոնոզոնի Արապգերցոյ, յիշատակ իւրն եւ բարի ծնողաց իւր՝ հօրն Պետրոսին եւ մօրն Խամմելիքին, եղբօրն Առաքելին եւ քրւերցն Սրբուհուն եւ Տիրուհուն եւ Մերտինին եւ ամենայն արեան մերձաւորաց նորին...: Արդ աղաչեմ... զստացող սորին զՎարդան մոնոզոն... յիշեսջիք...:

2. ԹԴ. 25ա. Տէր Յիսուս Քրիստոս ողորմեաց ստացողի գրոցս մղտեսի Վարդանին եւ ծնողաց իւրոց եւ ինձ մեղապարտ զբշի, եւ որ ամէն ասէ. ամէն:

3. ԹԴ. 28ա. Նոյնը. կ'աւարտի. «Եւ զձողի սորայ Կարապետին...:

4. ԹԴ. 35ա. Չլուսացող սորա մղտեցի Վարդան մոնոզոնն յիշեսջիք յաղաւթս, ով ընթերցողք...:

5. ԹԴ. 37ա. Տէր Քրիստոս Աստուած, տուր գորութիւն եւ արիութիւն եւ բարձր զձանձրութիւն ի գձողէս սորին Կարապետին: Այլ եւ ստացողի սորին մղտեցի Վարդանին...:

6. ԹԴ. 483ա. Ես կրօնաւորս յանապատին Յուզիճան անկեալ ապրին (ը պատուով) լեոնային եւ զաշտային մինչեւ հասեալ Պաղեստին, որ է քաղաք մեր Տէր Փրկչին, վարանեալ եւ տատանեալ եւ ոչ գտեալ հանգիստ ոտին. անտի նաւեալ ի Կիպրոսին, որ է յերկիր Եփիփանին, թիւն հազար ի հարուրին քսան եւ չորս յարայրարդին (1675):

7. ԹԴ. 481բ. Անարժան եւ անպիտան, յոյժ նվաստ եւ յետնեալ ծառայէս Յակոբէս հասցէ շատ բարեւ եւ ողջուն սիրոյ իմ համահայր եւ համամայր հարազատ սիրական Կարապետ եղբօրս. հարցանեմ զքեզ ի բարին: (Այլ բողոքելի գրով:) Պատճառ գիրոյս այս է, որ ես Մարտիրոսի որդի ոսկերիչ մահատեսի Յունանս ի թվին ՌԲՃԱ. (1752) ապրելի

քսան, առի ոսկերիչ մահատեսի Պետրոսէն հինգհարիւր զուուու զփոխ, որոյ կէսն կ'անէ ԲՃԱ օրօր վատկեով. որ իմ (դատար):

8. ԹԴ. 482բ. Ես մեղաւորս Թիֆլիցցի Յակոբըս զերեցի այս բանըս. բաւէ:

9. ԹԴ. 1ա. Պու քիթապը թէրճլուսայս պաշայլմ:

Մագաղաթեայ պահպանակ բուն Մեսրոպեան երկաթագրով, կը պարունակեն՝ 1. Յովհ. Ժ. 21—40: 2. Մատթ. Իէ. 12—26:

7.

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ ԼԱՍԻՆԱՅԻՈՑ «ՀԱՅԵԼԻ ՎԱՐՈՒՑ»

Թնիվթֆ. 194: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 21.4 × 15 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՆԻԻԹ՝ բուլղ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԴԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չուսի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ ՔԳ. 1, 191ա (կէտէն)—194բ: — ԳԻՐ՝ հոտրագիր: — ԽՈՐԱՆ ԵՒՆ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժԸ: — ՏԵՂԻ ԵՒ ԳՐԻՉ՝ անձամբօր:

Մատեանս է Հարանց Վարք Լատինացւոց, զոր թարգմանած է Ստեփանոս Լեհացի 1660ին «Հայելի վարուց» խորագրի տակ: Ձեռագիրս խորագրի չունի. ուրիշ գրչէ է թղ. 2ա «Հարանց վարք»:

ԹԴ. 2ա—190բ. Կը սկսի «Հրամայէ ի փրկական աւետարանին, թէ ուր գանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Որ իսկապէս այսպէս է: Քանզի ոմն մարդ յոյժ ազաճ...: — Բ. գլուխն է վասն աղօթից, սկզբնաւորութեամբս. Սատանայ ի կերպարանս զեղեցիկ երիտասարդի...»: Վերջին գլուխն է Օրինակի մէջ. «ԿԻ. Յաղագս սիրոյ ընկերին: Մեծ նշան սիրոյ առ ընկերն...»: ուր կան միայն Ա. եւ Բ. օրինակները. մնացածները ինկած:

Յիշատակագրութիւնք գրչէն կը պակսին: Կայ միայն թղ. 1ա. Եստի Օհաննեսան:

= Հրատարակուած՝ Գիրք Հայելի վարուց, որ ասի Հարանց Վարք, Կ. Պոլսի 1702:

8.

ՀԱԽԱՔԱԹՈՅ ՀՈԳԵՇԱՀ ԳՐՈՒԱԹՈՅ

Հին՝ Թ. 40: ԺԴ. դար: Թնիվթֆ. 299: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 17.4 × 13.1 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՆԻԻԹ՝ բաւրալիայ բուլղ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԴԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ վնասուած եւ ցեցակեր: — ԳԻՐ՝ բուլղգիր: — ԽՈՐԱՆ ԵՒ ՄԱՆՈՒՐԱՆ՝ ՆԿԱՐ՝ չկան: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ շատ պարզ: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԴ. դար: — ՏԵՂԻ ԵՒ ԳՐԻՉ՝ անձամբօր:

Մատեանս է Հաւաքածոյ հոգեշահ գրուածոց, ուր կան.

1. ԹԴ. 1ա. Խրատական գրուածք մը, շատ ցեցակեր եւ մաշուած. հասանօրէն նաեւ սկիզբէն թղթեր ինկած:

Այժմ կը կարդացուին
		դաւ					
		թերն զթողութիւն յա					
		ի յ Եւ առեալ ա					
		զբ			ն մ արդար է		
					ցգաւրու		
		զերկ			ուն		

2. ԹԴ. 1բ. (Կարմրագիր).
||| կետական. |||
||| ն աւուրս վասն |||
||| առաքինութեան: |||
||| Սայեա |||
||| ն Աստուծոյ ||| Աստուծոյ...:

3. ԹԴ. 2բ. Երանելոյն Գրիգորի (ասացեալ խրատ միանձանց): Աղաչեմ (մղճ)եղ, եղբ(ար)ք ինեւ հաւանողիք համոզուիչ: Սեռնասէրք առ միմեանս եւ (առ) չունչք: Սեռնասէրք քեզ պատուի խրատուց հարց որ ուսուցանեն քեզ պատուիտեանս. ամ(էն):

= Նոյնն ունին նաեւ էջմ. 641, 655. եւ այլն:

4. ԹԴ. 3բ—4ա. Տեանն Յովհաննու (Ոսկե)բերանի ի Կողոսսացոց թիթիոյն յորդորակ: Այսուհետեւ գոհացողք լիցուք զինչ եւ ի վերայ զայցէ. քանզի այն է գոհուեալ թիւն...: ՎՋ. մարտիրոս եւ վիկայ կատարեալ ||| անի եւ պաակեալ փառաւորի ի Քրիստոսէ:

= Հրտ. Յովհ. Ոսկեբերանի Մեկն. Թղթոցն Պաւղոսի, Ա., էջ 616—617:

5. Թղ. 4բ. Սրբոյն Նեղոսի պատուէր առ Մա(նկ)ունս: Պարտ է մանկանց ճգնել եւ եւ կրթել զմարմինս ի հնազանդութիւն պատուիրանաց...: ՎՋ. եւ այսպէս պատարազ լինել Աստուծոյ:

= Վարք Հարանց, Բ. 676—678:

6. Թղ. 6բ. Հարցունն. Ընդէ՞ր լինի կրանաւորն այնժոյժ: Պատասխանի. ի չաւղ-նելոյն Աստուծոյ...:

7. Թղ. 7ա. (Անխորագիր:) Քրիստոս սասց. Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն...:

= Հմմտ. Թ. 6, հատուած 87 (յանուն Թաթլոյ):

8. Թղ. 8բ. Հարցունն Արձանայ եւ Պատասխանի Եզնկայ Կողբացոյ: Հարց. Վարդապետի: Արձան ասէ. Զի՞նչ է կրանաւորութիւն: Եզնակ ասէ. խաչակցութիւն ընդ Քրիստոսի...:

9. Թղ. 10բ—14բ. Մաթոսի սասցեալ ի Գալուստն Քրիստոսի (ոտանաւոր): Արդ զահագին աւրն յիշեցի,

այ ||||| չէն եւ ի պատմել լինի. յոր(ում) արեգակն խաւարի, եւ լուսին ի խաւար անդր դարձցի. լոյս յաստեղացն պակասի, տարերք երկրի քակեալ լինի...: ՎՋ. աւրհնեալ եղբայր, լիշեա զգրողս:

10. Թղ. 14բ. (Որտաք Ս. Հարց:) Ասաց ոմն ի Հարանց, եթէ երկու եղբարք զրացեք էին յանապատի. մինն աւտար եւ մինն ընդի...:

11. 21բ. ի Վարուց Հարցն խրատք: Պահեա գսիրա քո եւ գաչս քո, որ ոչ տեսցեն զբազում |||: ՎՋ. Երանի որ ուրանայ զառժամանակեայս եւ ընդունի զյաւիտենական ուրախութիւնսն ի Քրիստոս...:

12. Բ. 29ա—30ա. ի թիթոյն Մովսէսի միայնակեցի առ Ամոն բան խրատոյ: Երկեղն Աստուծոյ մերժէ զամենայն չարախաւսութիւն...: ՎՋ. եւ որ փութայ ստանալ զառաքինութիւնս զայս կարէ (կա)տարել չնորհաւրն Քրիստոսի...: (Նոյնը նաեւ թղ. 87ա):

= Հրտ. Վարք Հարանց, Բ. 532:

13. Գ. 30ա—34բ. Սոստովանութիւն հաւատացելոյ ուղղափառաց (Զ. ուղա եւ առաց): Քրիստոս Որդի Աստուծոյ արարիչ եւ Տէր, զատուոր կենդանեաց եւ մեռելոց, որ տարածեցեր զտուրք եւ զանարատ բա-

ղուկս քո...: ՎՋ. Երկրպագութիւն եւ խոստովանութիւն առաքողին Հաւր եւ առաքեալ Միածնիդ եւ Հոգւոյդ սրբոյ...:

14. Թղ. 35ա. Սրբոյն Թէոփիլի ասացեալ յաղագս Զղջման եւ Արտասուաց: Արդ պարտ է անդադար ամենայն մարդոյ զայս զմտաւ ածել եւ ասել ընդ միտս...: ՎՋ. Աղաւթից քոց Աստուած ոչ լսէ, յորժամ քաղցելոյն եւ ծարաւելոյն եւ կարաւտելոյն ոչ լսես:

= Վիեննա, 524, 104բ (Յուցակ, 995):

15. Թղ. 36բ—37ա. Զ. Որտաք (ո)գէչ ահ՞. Եղիշէի վարդապետի: Ի ձեռն կերակրոց մտանեն այս մեղք ի բնութիւն մարդոյ: Եւ որ զայս դուռն փակէ, բազում ֆլաս արգելու ի նմանէ...: ՎՋ. Եթէ կամիս մարմնովդ որպէս զանմարմին աւրհնել զԱստուած, մի ստանար ինչ ի կեանս քո:

= Հատուածս ունինք եւ այլ ձեռագիրներու մէջ. հմմտ. Ակինեան, Եղիշէ, Գ., էջ 440—441:

16. Թղ. 37ա. Է. Անանիայի վարդապետի սասցեալ վասն Համբերութեան: Արդ յորժամ մարդ չնորհս առնու յԱստուծոյ իմաստութեան եւ երկեղի...: ՎՋ. Արդ զայս իմացեալ դու՞ զամենայն տրտմութիւն եւ երթ (Զ. ետ) զհետ նորա...:

= Տես Թ. 6, հտժ. 83:

17. Թղ. 42ա. Ը. (Անանիայի) Վասն խոնարհութեան: Արդ որպէս ասէ Առաքեալ՝ Ամենայն խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել քան զանձինս...: ՎՋ. եւ յետին համարել զանձն վասն Քրիստոսի...:

= Հմմտ. Վիեննա, 364, թղ. 138բ:

18. Թղ. 46ա. Թ. Նորին բանք Աղաւթից: Զկարգեալ աղաւթսն հասարակաց...: ՎՋ. Ողջ լիբ միշտ ի կամս Աստուծոյ քո:

19. Թղ. 46բ. Ժ. Այլ եւ զայս հարցեր, եթէ զի՞՞րդ կարէ մարդ արհամարհել զերկրաւորս որ անցանէ, եւ Աստուծոյ միայն ցանկալ եւ արքայութեան նորա: Արդ եթէ կամիս յաղթել աշխարհ(ի)...: ՎՋ. եւ յԱստուծոյ խնդրեա ազնականութիւն եւ չնորհիւն Աստուծոյ յաղթես աշխարհի...:

20. Թղ. 51ա. ԺԱ. Նորին յաղագս խորհրդոց զվուշութեան: Արդ նախ յառաջ քան զամենայն ինչ խորհրդոց մաքրութեան ջան տար...: ՎՋ. եւ ես սակաւուք քո իմաստութեանդ պատճառս ետու:

21. Թղ. 54ա. ԺԲ. Երանելոյն Գրեկորի խրատք ճգնաւորաց եւ ցոյցք հանդի(սի)ց առաքինութեան: Ամենայն որ ոք հրաժարեցաւ յաշխարհէս եւ ընծայեցին զանձինս ի հնազանդութիւն ճշմարտութեան սուրբ հարցն աւանդից...: ՎՋ. որքան է փառք եւ մեծութիւն եւ շնորհք որ տաճար (լի)նի ամենասուրբ Երրորդութեանն, զի բնակեցցի (ի) նոսա:

= Յաճախ ի ձեռագիր. հմմտ. Վենետիկ, 275, 55ա. Յուցակ, 922:

22. Թղ. 57ա—73բ. (Ի Հարանց Վարուց): Եղբարք ոմանք զնացեալ առ հայ(րն) րուց): Եղբարք ոմանք զնացեալ առ հայ(րն) րուց): Եղբարք ոմանք զնացեալ առ հայ(րն) րուց): Փեղիքս եւ ընդ նոսա յաշխարհականաց...: ՎՋ. եւ զայս սասցեալ աւանդեաց զհոգին ի Քրիստոս...: (Մանր պատմութեան զնախնիք):

= Հմմտ. Վարք Հարանց, Ա. 536 եւ Բ. 116:

23. ա. Թղ. 74ա. Սրապիտնի ս(րբոյ) Եպիսկոպոսի թմուցացոյ յաղագս Համեստութեան սկսնակաց եւ յաղագս կամեցոտութեան ընակել ի հաւասարակենցաղս եւ յաղագս (միայ)նակ(եցա)ցն: Ոչ կամիմ զձեզ անգիտանալ, եղբարք, զի ի սկզբանն յորժամ արար Աստուած զմարդն...:

Բ. Թղ. 76ա. Յաղագս Համեստութեան սկսնակաց: Նախ քան զամենայն յամենայն նում իրի պիտանամք զնուստախոհութիւն...:

Գ. Թղ. 80ա. Յաղագս կամեցողացն ընակել ընդ միմեանս: Եթէ մտանիցես բնակել ընդ եղբարս, պահեա զքեզ ինքն...:

= ա—գ. Վարք Հարանց, Բ. 507—511:

24. Թղ. 87ա. Ի թղթոյն Մովսէսի միայնակեցի որ առ հանդիսակիցն ուր Ամոն բան խրատու: Երկեղն Աստուծոյ մերժէ զամենայն չարա(խոս)ութիւնս...: Տես նաեւ թղ. 29ա:

= Վարք Հարանց, Բ. 532:

25. Թղ. 88բ. Բանք Յոհաննու միայնակեցի Թէրայեցոյ, աշակերտի Ամոնիայ: Ասէին վասն Փոքր Յովհաննու աշակերտի Ամոնիայ, եթէ տասն եւ երկու ամս արար սպասաւորելով ձերոյն...:

= Վարք Հարանց, Բ. 26:

26. Թղ. 89ա. Վարք Պաւղոսի անապատականի: Առ բազումս բազում անգամ խնդրել լինէր...: ՎՋ. Արդ եւ աղաչեմ... զԵրոնիմոս մեղաւորս յիշել...: Կատարեցաւ սուրբն Պաւղոս ի Քրիստոս Յիսուս...:

Զեռագրին մէջ թղթերու ետեւառաջութիւն կայ. շարունակութիւնն թղ. 153ա:

= Վարք Հարանց, Բ. 1—16:

27. Թղ. 98բ. Թուխթ Դ(ի)ոնէսիոսի աշակերտի Պողոսի առ Տիմոթէոս աշակերտ եւ Եպիսկոպոս Ասիացոցն յաղագս Մահուն Պաւղոսի եւ Պետրոսի, գրեալ ողբերգական ճայնիւ: Ով աշակերտ աստուածային եւ որդի հոգեւոր, սիրտ եւ խորհուրդ...: ՎՋ. ընդ որում եւ զպսակն ընկալցուք...:

= Անկանոն զիրք առաքելականք Վենետ. 1904, էջ 110—122:

28. Թղ. 105բ—115բ. Վարք եւ քաղաքա(վա)րութիւն Ս. Դիոնէսիոսի Աթենացոյ Եպիսկոպոսի Արիապագացոյ: Պատմեաց Եպիսկոպոսի Արիապագացոյ: Պատմեաց վասն անձին իւրոյ երանելին Դիոնէսիոս եւ ասաց. Եղբարք իմաստութեան սիրողք, Դիոնէսիոս որդի Սոկրատա գլխաւոր եւ փառանէսիոս որդի Սոկրատա գլխաւոր եւ փառաւոր Աթենացոյ...: ՎՋ. եւ ապա ներեալ նուոր Աթենացոյ...:

= Ակինեան, Նիւթեր հայ վկայարանութեան ուսումնասիրութեան համար, Վիեննա 1914, էջ 35—41:

29. ա. Թղ. 115բ. (Գրեկորի Նարեկացոյ Աղօթք). Որդի Աստուծոյ կենդանոց աւրհնեալ յամենայնի...:

Բ. Թղ. 116բ (Նորին). Մաղթանք զաւրաւորք արհաւրաց գիշերայնոյ: Ընկալ քաղցրութեամբ...:

30. Թղ. 117բ. Յաղագս ձգնաւորաց: Որ ոք կամեցի Քրիստոսի Աստուծոյ հաճոյ լինել, յառաջ քան զամենայն զխոնարհութիւն եւ զհամբերութիւն եւ զերկայնմտութիւն պարտի ստանալ...:

= Վարք Հարանց, Բ. 610:

31. Թղ. 118բ. Յառաջադիմութիւն Արեւայի: Որպէս մարդ զի տնկէ այգի եւ յանցանել զժնեա(յ) ձմերան եւ յահագին հողմոցն...: ՎՋ. ըստ ճանապարհացն զոր զնացին ի վերայ երկրի: Որում փառք...:

= Անդ, Բ. էջ 628—630:

32. Թղ. 128բ. Պատմութիւն հաւր Մաւրա(յ) Եգիպտացոյ: Սկիզբն արասցուք պատմել զերանելոյն Մաւրա(յ) Եգիպտոս իւր ցանկութիւնն վանանց(ո):

= Անդ, Ա. 89—97:

33. Թղ. 141ա, 213ա—225. Վասն Պաքմիոսի: Տարեկանս ոմն (Զ. ումն) ի կողմանս

Հնդկաց, ուր եւ Պարսիս: Թղ. 213ա—226բ. ՎՋ. Ի գունդս հրէշտակաց խառնեալ վերացեալ յերկինս:

= Անդ, Բ. 476:

34. Թղ. 144բ. Երանելոյն Մակարայ բան գիտնաւոր: Որոց լսեն զբանն Աստուծոյ եւ առնեն բարի պտուղ...:

= Անդ, Բ. 570:

35. Թղ. 146ա. Առ արբաս Մակար Հա(ր)ցուածք Եղբարց: Հարց. թէ որպէս պարտի իւրաքանչիւր ոք ի մէնջ ժողովել զիւր միտս...:

= Անդ, Բ. 574 եւ շար.:

36. Թղ. 148ա. Առ հայրն Մակար Հարցուածք վասն Որոշողութեան խորհրդոց: Արար Աստուած զմարդն եւ եղ զնա ի զրախտին...:

= Անդ, Բ. 571:

Բ. Թղ. 152բ. Յաղագս Առաքինութեան: Որ ոք պահէ զսա, կարէ ապրել ի գեհնէն:

Գ. Թղ. 162ա. Հարցուած, թէ որպէս պարտ է դատել ումեք ի տան: Պատասխանի. Զի մի բնաւ իսկ ամենեւին ունիցի ոք յինքեան յիշողութիւն ինչ մարդոյ... (Ա.—Թ Հարցմունք եւ պատասխանիք)...: ՎՋ. եթէ եղեալ եմ ի Սկիւթ, չոգայր տեսանել անդ զմեծ ոմն ի սուրբ Հարանցն. որոց բազում իսկ ժամանակս լցեալ էր անդ:

= Անդ, Բ., էջ 575—578:

37. 164բ—171բ. Սկիզբը պակաս. մեղայական գրուածք մը, յայտնի չէ թէ գրչի՞նն է, թէ ինքնակաց գրութիւն մ'եղած է: Այժմ կը սկսի. «ոգուց կամ ըստ մարմնոյ. կամ սգայարանաց...:

Փ38. Թղ. 171բ—174բ. Աղաւթը սրբոյն Եփրեմի: Բժշկեայ զիս, Տէր, եւ բժշկեցայց, որ միայն իմաստունն եւ զթած բժիշկէ ես...: ՎՋ. որ բացեր զբերան համերն, բաց զբերանս իմ ի փառս եւ ի գովութիւն քեզ յաւիտեանս. ամէն:

39. Թղ. 175ա—181ա. Մատեան (Ձ. մանեան) պաղատանաց սուրբ վարդապետին Մեղրկայ զինի ելից իւրոց յաշխարհէ: Կամաք եւ ողորմութեամբ ամենասուրբ Երրորդութեանն... այն իմ գիր ողջունի եւ պաղատանաց է, մեղապարտ եւ տրուպ ծառայի Աստուծոյ Գէորգեա, զոր զրեցաք առ Համարէն սուրբ Եղբայրութիւնդ...: ՎՋ. ուր պատարագի կենարար անապական եւ ան-

մահական եւ աստուածացուցիչ մարմին եւ արիւն միածնի Որդոյն Աստուծոյ... ամէն:

= Հրտ. Հանդ. Ամս. 1950, էջ 142/146:

40. Թղ. 181ա. Սքանչելիք Յոհաննու Ոսկերերանի: Այլ ոմն էր յԱնտիօք քաղաքի, մեծատուն յոյժ...: Կը խօսուի երկու սքանչելիքի մասին:

41. Թղ. 184ա. Յաղագս Որովայնի. ասաց հայրն Պիմէն [ասաց հայրն Պիմէն]. Առաջի(ն) պատերազմ կրանաւորին որովայն իւր է...: ՎՋ. եւ վախճանեցաւ բարի վարուք. սա եղեւ աւերինակ բարի ամենայն միայնակեցաց մինչեւ ցայսօր:

Այլ եւ այլ պատմուածք Հարանց վարքէն:

= Վարք Հարանց, Բ. 184—185:

42. Թղ. 190ա. Ճառ Պաւղի միայնակեցի: Պաւղ էր այր հողագործ եւ առաւել անբիծ...: ՎՋ. եւ թաղեցին զնա Ամոնաս եւ Անտոնին աշակերտք Անտոնի:

= Անդ, Ա. 82—88:

43. ա. Թղ. 195ա. Որ յերկրին Եգիպտացոց Հարանցն առաքինութիւնն: Աւրհնեալ է Աստուած, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեացեն...:

Բ. Թղ. 199ա. Վասն Ապողոբեայ: Տեսաք մեք այր մի յերկրին Թերայեցոց...: ՎՋ. իրրեւ զգունդս գունդս արդարոցն սպիտակահանգերձս անդադար աւրհնութեամբ զԱստուած փառաւորէին:

Գ. Թղ. 203ա. Վասն Ամոնիւեայ: Տեսաք մեք անդ ի կողմանս Թերայեցոց այր մի Ամոնիւ անուն նորա...:

Դ. Թղ. 204բ. Վասն Եպողոնի (Ապողոնի) ծերոյն: Տեսաք մեք այլ ծեր մի ի կողմանս անշինաց, Պէնեղիոս անուն...:

Ե. Թղ. 207բ. Վասն Պաքրոտեա (Պապրոտեայ): Չոգաք մեք եւ գտեղին Պաքրոտեն մեկնաւորի...: ՎՋ. այլուտ բազում անդամ եւ հանդերձիցն հոտոց կատարէ զցանգութիւն:

= ա.—Ե. Անդ. Ա. 207—223:

44. Թղ. 212ա. Երանելի սուրբ հաւր Նեղոսի ճգնաւորի Քրիստոսի յաղագս Աղաւթից. գլուխք ճՄ: Որ ոք կամիցի անուշահոտ խոնկա կազմել զբերեւելի կնքրուկն...: Թուղթ ինկած եւ թղթեր տեղափոխուած:

= Անդ, Բ. 700—716:

45. Թղ. 226ա. Պատմութիւն Իղոզնի

Աղէքսանդրացոյ: Այս Իղոզնոս քողաստիկոս էր...:

= Անդ, Ա. 224:

46. Թղ. 233ա. Սրբոյն Նեղոսի խրատք հոգեշահք: Ճանապարհք յառաքինութիւնս հրաժարունն յաշխարհէ:

= Անդ, Բ. 684—692:

47. Թղ. 235բ—237բ. Պատուէր խրատուց հարց սրբոց: Փութացարուք, միայնակեացք, մի ինչ (Չ. մի մնչ) յանցանել, զի մի զբնակակիցն ձեր զԱստուած թշնամանիցէք...: ՎՋ. ի յաւիտենական կենացն վայելչութեան ի Քրիստոս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

= Անդ, Բ. 607—609:

48. Թղ. 237բ—283ա. Կցուրդք երանելոյն Եփրեմի խորին Ասորոյ: ա. (Բ)աց մեզ, Տէր, դուռն դանձու աղաւթից խնդրուածոց մերոց...:

Բ. Աւրհնեալ է որ եհան յաստիճան(նս գուա)րթնոց զորդիս մարդկան մահկանացուս: Եղիայ ի Քորեբ լերինն քառասուն աւր պահեաց...:

Գ. Վասն կուսութեան դարձեալ: Զի թէ փեսայ երկրաւոր զընկալուչս իւր որ (Չ. ա՛ր) պահեցաւ նմա, մեծաւ շքով ամէ զնա... (Թղ. 243ա):

Դ. Աւրհնեալ է Տէր սրբութեան եւ կուսութեան բարձրացելոց: Աւրհնեալ է փեսայն, որ գալովս իւրով բարձրացուցանէ զկուսութիւն... (Թղ. 246բ):

Ե. Կցուրդ կուսանաց եւ Սրբոց: Աւրհնութիւն արքային Քրիստոսի. աւգնեա Աստուած: Մաքառումն որ եղեւ յերկրի, ունկնդիր լիցին նմա որոշողք: Կուսութիւն մաքառի ընդ լծակցի իւրոյ... (Թղ. 250բ):

(Գ.) Չայնակից նոցա: Կուսութեան լուսայ ես զի ինքն ցինքն ասէր նա, եթէ մահկանացուի ես ոչ խաւեցա... (Թղ. 254բ):

Զ. Աւրհնեալ է այն որ կեցոյց յաշտիճան գուարթնոցն զհոգեղէնքս: Միածին Աստուծոյ մերոյ, տուր ինձ պատմել զառաքինութիւն կուսութեան. եւ սրբութեան... (Թղ. 258ա):

Ր. (անվերնագիր) Աւրհնեալ է որ արժանի արար... (260ա):

Ք. Վասն Ամուսնութեան ձայնակից նորին: Կցուրդ ի բերանոյ կուսանաց եւ ի Սրբոց. Քեզ, Տէր, աւրհնութիւն, փրկիչ:

Լուր, լուր, ամուսնութիւն, զպատերազմ յոր մտեալ էին Կուսութիւն եւ Սրբութիւն. եւ մաշեցաւ... (Թղ. 261ա):

Ժ. Աւրհնութիւն (քերես առաջին) գիշերոյ Կցուրդ. Որդի փառաւորի ի գուարթնոց. աւրհնութիւն քեզ ի հսկողաց: Ո՞հսկողք, նմանեցէք Մովսիսի զլիւոյն Հերբալեցոց. այն որ աւտա(ր)ացաւ ի քնոյ զաւուրան որ եկաց ի լերինն... (Թղ. 263ա):

Ժա. Երկրորդ գիշերոյ Կցու(ւ)րդ: Աւրհնեալ է այն որ գայ եւ ուրախ առնէ զհսկեցողս ի յայտնութեան իւրում: Ժուժեցայք փոքր մի, առաքինիք, բանալով զճանրութիւն խաւարի... (Թղ. 265ա):

Ժբ. Երրորդ գիշերոյ Կցու(ւ)րդ: Գոհացին զքէն հսկեցողք, որք արժանի եղեն լինել ընկեր (սրբոց) Սրովբէից: Մի տայք ի շխանութիւն քնոյ թագաւորել յանդամս ձեր... (Թղ. 31բ, տպ. 15—19):

Ժգ. Չորրորդ գիշերոյ Կցուրդ: Աւրհնեալ որ արժանի արար զորդիս Աղամա(յ) սարմուսել ընդ հրեշտակ(ս): Երանի է հսկեցաւոց, այնց որ յամենայն գիշերս ընդդէմ քնոյ դարգեալ են... (Թղ. 273բ):

Ժդ. Հինգերորդ գիշերոյ Կցուրդ: Աւրհնութիւն որդոյ, որ ուրախ առնէ զհսկեցողս ծագմամբ իւրով: Դաւիթ արքայ որ խորհեցաւ շինել տաճար Աստուծոյ, ուխտեաց ուխտ ընտրութեան... (Թղ. 275բ):

Ժե. Վեցերորդ գիշերոյ: Ընդէ՞ր խափանեցաւ ի շին(ել)ոյ գտունն Դաւիթ. եւ եթէ զի արիւնս բազումս եհեղ՝ արգել զնա: Թէ Դաւիթ որ կոտորեաց զազգս եւ չէր աւրէն շինել գտուն... (Թղ. 269ա):

Այս տեղ կ'ընդհատին Գիշերոյ Կցուրդի: Յաջորդ ժՁ—ի Կցուրդները ընտրովի են հանուած Կցրդոց գիրքէն, որ պահուած է էջմիածնի Թ. 821 ձեռագրին մէջ թուով ժՁ—ԾԱ: Այդ Կցուրդներէն ունինք հոս հինգը միայն...:

(Ժզ.) Աւրհնեալ անդրանիկն որ ետ զմարմին իւր ի քաւութիւն մեղաց մեղաց (ա՛յսպէս) մերոց: Ասաց Տէր մեր յաւտաբանի անդ սրբում. Եթէ ոչ ոք ուտէ զմարմին... (Թղ. 270բ, տպ. 125):

(Ժէ.) Կցուրդ: Աւրհնեալ որ ետ զմարմին իւր ի սպանումն, զի ուրախ լիցի(ն) հեթանոսք: Սրբապէս կերիցուք զմարմինս, զոր բեւեռեաց ժողովուրդն բեւեռաւք... (Թղ. 272բ, տպ. 129):

(Ժբ.) Կցուրդ. Աւրհնեալ որ ետ գմար- մինն իւր ի քաւութիւն ամենայն հաւատա- ցելոց: Կարեւք մատիցուք, եղբարք առ մար- մին(ս) այս... (Թղ. 277բ. տպ. 132):

(Ժք.) Կցուրդ: Աւրհնեալ որ եկն ի լրունն խորհրդոց իւրոց: Սրբեսցուք զան- ձինս մեր, սիրելիք, եւ մատեցուք առ հացն կենաց... (Թղ. 279ա):

(Ի.) Կցուրդ: Աւրհնեալ որ գրոջմեաց արեամբ զհարսն գոր ստացաւ: Զի ցանեցին հեթանոսք զարիւնն անասնոց առաջի որ- թուց... (Թղ. 282ա. տպ. 136): Վջ. Եթէ աւրինակ անիծեալ աւճին կեանս ետ մարմնոյ, մարմին եւ արիւն աւրհնելոյն քանի եւս տայցէ հոգւոյ:

Զեռագրին մէջ Թղ. 268բ «զի կորոյս գտ[իս]» ունի իր շարունակութիւնն Թղ. 273ա. «սունս լողկի իւրոյ» մինչեւ Թղ. 276բ. ուր «որ ընդ նմա էին, զիարդ» կը գտնէ իր շարունակութիւնը 268բ [իս ազգին իւրոյ յ] «անաւրինէր սպանանել ի նանիր...»: Իսկ Թէ Թղ. 273ա «հեթանոսաց շինեցաւ եկե- ղ(եց)ի» ունի իր շարունակութիւնը Թղ. 277ա «յոր տեղի ժողով է աղաւթից...»:

Զեռագիրս ըստ մասնէ կը լրացնէ էջ- միածնի Թ. 821. միակ ձեռագրին սկիզբն եւ մէջերը ինկած թուղթերն եւ ետեւտաջու- թիւներն թղթերու: Այս միակ օրինակէն արտագրուած են Վենետիկի Մխիթարեանց ձեռագիրը, եւ Վիեննայի Մխիթարեանց Թ. 257, Թղ. 51ա—87բ: Էջմիածնի այս օրի- նակը կը սկսի ԺԶ. Կցուրդէն, ուստի առա- ջին Ա.—ԺԵ ինկած են: Վենետիկի օրինակէն հրատարակեց այս պակասաւոր Կցուրդը Զ. Գ. Սարգսեան, Ս. Եփրեմի Խուրին Ասոր- լոյ Կցուրդը, Վենետիկ 1934: Ա.—ԺԵ Կցուրդ- ները տպագրուեցան Ուսումնաթերթիս մէջ, 1953, էջ 481—522. 1954, էջ 257—283. 449— 465:

49. Թղ. 283ա—299բ. Սուրբ վարդա- պետին Գրիգորի Սկեւոացոյն է ասացեալ Աղաւթըս: Աստուած բարձեալ ահաւոր ան- քնին, Աստուած իմանալին...: Վերջին բերի՛ բուրբեր ինկած ըլլալով. այժմ կ'ա- ւարտի. «եւ որք իբր նպաստաւոր ի քում մե- ծութենէդ ի մեզ ինչ պողարեր |||»:

— Գիրք աղօթից Գրիգորի Սկեւոացոյ. Կ. Պոլիս 1742, էջ 154—187:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Զեռագրիս վերջէն թղթեր ինկած ըլլալուն պատճառաւ

կը պահսի բուն Յիշատակարանը: 1. Թղ. 10բ. կար «Մաթոսի ասացեալ ի Գալուստ Գրիս- տոսի» ոտանաւորը, որուն վերջը. Թղ. 14բ. կ'ըսուէր. «աւրհնեալ եղբայր յիշեալ գգրողս»: Թերեւս սա ըլլայ Զեռագրիս գրիչը: 2. Թղ. 35ա. Ո սաստուածասէր եղբարք, գրիչդ որ եւ զծնողսն իմ յիշեսչիք ի սուրբ եւ յաստուա- ծընդալ յաղաւթս ձեր եւ Աստուած զձեզ յիշէ:

Զ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԻՐԱՆԵԱՆ ՏԱՐՐՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՐՆԵՐ ՄԷՋ

Բ.

«Հանդէս Ամսօրեայ» ի նախորդ տարւոյն* մէջ հայ ժողովրդական հաւատքի զեցարա- նական մէկ դէմքին վրայ խօսուեցաւ, որ Զրադաշտական կրօնքի մէջ գերագանց նշա- նակութիւն ունեցած, Հայոց քով հաւանօ- րէն Կրող անունով ապրած եւ ատկէ դատ՝ ինչպէս ուրիշ տեղ պիտի սպացուցուի՝ ու- րիշ ժողովուրդներու քով ալ յայտնի հետքեր թողած է. ըսել կ'ուզենք Սրառչա (պահլ. Սրոշ), եօթը «հրեշտակապետներէն» (ամ- պահսպանդ) մին, իրանեան հոգեւորը եւ Միհրին ու Ռաշնուն հետ առանձնական դատաստանի հոգեկատը: Սակայն պարսկա- կան պահսպան օգին լոկ հոգեւոր ու հոգե- դատ չէ, այլ յետնագոյն Աւեստայի մէջ եւ Պահլաւեան շրջանին՝ աւելի դիւահալած է եւ այս յատկութեամբ իրեն օգնական ու դաշնակից ունի շուրն ու ախալաքը¹:

2. ԵՐԿՆԱՅԻՆ ԱՔԱՂԱՂԸ — ՊԱՐՈՂԱՐՇ

Սրառչային դաշնակից համարուած բո- լոր աքաղաղներուն մէջ զեցարանական երկ- նային աքաղաղը՝ Պարողարը (= «այն որ ամէնէն առաջ կը տեսնէ») իրանեաններու քով մասնաւոր տեղ մը կը գրաւէ: Զարմա- նալի չէ, հետեւարար, եթէ անոր մասին յի- շողութիւններ պահուած ըլլան Հայոց եւ ու- րիշ ժողովուրդներու ժողովրդական հաւատ- քին մէջ ալ, ազգեցութեամբ իրանեանց, սա՛

* Հանդ. Ամս. 1953, էջ 196—205: ¹ Bund, 19, 33, Հմմտ. M. N. Dhalla: Zoroa- trian Theology, New York 1914, 238.

տարբերութեամբ որ անոր յիշատակները (Reminiszenz) աւելի բազմաթիւ եւ աւելի որոշ են, քան Սրառչայինը, որ ժողովրդա- կան աւանդութեան մէջ հոն ալ գրեթէ բո- լորովին աներեւութացած է, ուր երկնային աքաղաղը ժողովուրդին երեւակայութիւնը դեռ կը գրաղցնէ: Յայտնի է որ երկնային զարթուցիչի մը բանաստեղծական զիջը, որուն երկրային օրինակները (պատկերները) ամէն օր ժողովուրդին աչքին առջեւ են՝ յատուկ ձգողականութիւն մ'ունեցած է ժո- ղովրդական երեւակայութեան վրայ: Սակայն յաջորդիւ տեսնենք նախ Սրառչայի եւ իր ստղութեակայ Պարողարը ինքնապաշտպա- նութեան դերի մասին քանի մը անհրաժեշտ նախազիտելիքներ:

Սրառչա՛ բոլոր ժամանակներու Պարսիկ- ներուն համար անպարտելի զիւցազն էր, որ դեւերը կը վախցնէ ու կը սարսափեցնէ, անբուն հսկիչը զիւերուան, տեսականօրէն մարտնչուծի մէջ խաւարի իշխանութիւննե- րու դէմ²: Ան կը պաշտպանէ ու կը պահէ աշխարհը արեւամարէն — ժամանակ՝ երբ դեւերը դուս կու գան — մինչեւ արեւու ծա- գումը՝ մարտնչելով Եշմայի, իր մեծագոյն գումը՝ մարտնչելով Երուսի դէմ³: Գի- թնամուտն եւ դիւական Դրուսի դէմ⁴: Գի- շուսի թէ՛ ո՞վ է դեւերը զարհուրեցնողը՝ կը պատասխանէ Ահուրա-Մազդա. «Այն իր ձայնը, որ Պարողարը (աքաղաղ) կը կո- թոչուր, որ Պարողարը (աքաղաղ) կը կո- թոչուր, ո՞վ Սպիտամա Զարաթուստրա, զոր շարախօս մարդիկ կահրկատաս (կուկուրի- կու) կը կոչեն: Ու այս թոչուրը՝ աճող ար- շալոյսին՝ կը բարձրացնէ իր ձայնը. Ոտքի՛ շալոյսին՝ կը բարձրացնէ լաւագոյն Ասխաֆ, ելէք, մարդիկ, զովեցէ՛ք լաւագոյն Ասխաֆ, անիծեցէ՛ք դեւերը: Այն բուսահանստան, երկայն թաթերով, ձեզի կու գայ — ա՛ն է երկայն թաթերով, ձեզի կու գայ — ա՛ն է որ, երբ աստղերը կ'արթնան (իրեկունը), ամբողջ աշխարհը մէկէն կը քնացնէ (ըսե- լով)»:

² Yasna 57, 17. Yašt 11, 12. Հմմտ. Dhalla, անդ, 102. ³ Yasna 57, 10. Yašt 11, 10—11. Հմմտ. Dhalla, անդ: ⁴ Հմմտ. Dhalla, անդ, 103.

լով)» «Ո՛վ մարդ, երկա՛ր քնացիր, ժամա- նակը դեռ չէ անցած⁵»:

Երկնային աքաղաղի այս դերը ակն- յայտնի է եւ մեկնութեանց կարօտ չէ: Յի- շատակելի պարագայ մը կայ սակայն. Իրա- նեան Պարողարը, որ աստուածաբանական զարգացումը արտայայտիչն է՝ Beneviste ի ըսածին համեմատ՝ կենդանի բարբառին մէջ թափանցած չըլլալուն՝ Նոր-Իրանեան գա- լաուարարաններու մէջ հետք մը ձգած չէ⁶:

Ռամկական Kahrkata ի եւ իր բազմաթիւ ձեւերուն (սանս. Krkvala, ետղդ. Karkevas- voutour, պահլ. Kārg, օսեթ. Kārk, եւ այլն⁷ հակառակ՝ հայերէնի մէջ ալ, որքան զիտենք, Պարողարը մասին լեզուական հետք մը չէ մնացած: Բանաստեղծական Kahrkataն անո՛ր համար ուշադրութեան ար- ժանի է՝ վասն զի մարդ կը փորձուի իրա- նեան ձեւ մը՝ հայերէն ախալաղի հետ կա- պակցութեան մէջ դնելու: Թէեւ Աճառեան կ'ապոհօվցնէ թէ վերջինս նախահայերէն է իրեն ապացոյց կ'առնէ սա արմատականը — կել — կանչել, գոչել (սանս. Kalakala — գոչիւն, աղմուկ, յուն. χαλέω, լատ. clamo եւ այլն) եւ դաւառ — հայ. ախլիլոր (= ա- քաղաղ): Սակայն այս յարակցութիւնը հա- լանականութենէ աւելի արժէք մը չունի, քանի որ սանս. Kalakala հնչարանական օրէնքով (ա)խալախալա պիտի տար. Աճա- րեանէ ընդունուած կազմաւորումը (Kon- traction) Բաղալ > խալաղ ենթադրական կը մնայ, իսկ կել (Kel) արմատ մը ախլիլորի մէջ՝ տարակուսական է, քանի որ հնչարա- նօրէն ախլիլոր պիտի սպասուէր⁸: Գեռ կայ սա կարեւոր պարագան որ ախալաղ՝ հին հայերէնի (գրաբար) մէջ աւելի հաւով կը բացատրուի եւ որ շատ մը բարդութեանց մէջ ալ կ'երեւայ, մինչ կը սպասուէր որ ախ- յալ գործածուած ըլլար (օրինակ՝ հաւա- յսու)⁹: Ասկէ սակայն կը տեսնուի թէ հնա-

⁵ Թարգմանութիւն Geldnerի ի գիրս Avesta, Pahlavi and Ancient Persian Studies in Honour of Sanja. First Series. London 1904, 203—204. ⁶ E. Bénéviste: Une différenciation de voca- bulaire dans l'Avesta ի շարս „Studia Indo-Ira- nica“, Հրս. W. Wüst, Leipzig 1931, 219. ⁷ Bénéviste t. c. W. Tomaschek: Central- asiatische Studien: Pamir-Dialekte. Wien 1880, 38. ⁸ Չ. Աճառեան, Հայերէն Արմատական Բառա- րան, Երեւան 1935, 101: ⁹ Բ Անդ: